

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

**

Ա.

ԹԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՇ. ՀԱՅՐԱՊԵՏԻ

Հայրապետական տնօրէնութիւնք.

Կոնդակ յանուն Առաջնորդի վիճ. հայոց Վրաստ. և Իմերէթի, որով պատուիրեցաւ առնել շրջաբերական տնօրէնութիւն ի թեմի իւրում՝ յորդոր կարդալով առ ժողովուրդ հայոց սատար հանդիսանալ նուիրաբերութեամբ իւրով թշուառացելոց հայոց յաղետից հայ-թուրքական ընդհարմանց։ Նուիրաբերութիւնք պարտին առաքել ի գանձարան Ցանձնաժողովոյ արկածեալ հայոց Կովկասու։ Թ. 77.

— Ցանուն Փոխ թեմակալի հայոց Երևանայ, ի նոյն միտս։ Թ. 78.

— Ցանուն Առաջնորդի վիճակին հայոց Շամախւոյ, ի նոյն միտս։ Թ. 79.

— Ցանուն Առաջնորդի թեմին հայոց Աստրախանի, ի նոյն միտս։ Թ. 80.

— Ցանուն Առաջնորդի հայոց թեմին Ն. Նախիջևանի և Բեսարաբիոյ, ի նոյն միտս։ Թ. 81.

— Յանուն Առաջնորդի թեմին հայոց Ղարաբաղու, ի նոյն միտս։ Թ. 82.

— Յանուն Առաջնորդի հայոց թեմին Պարսկա-Հընդկաստանի, ի նոյն միտս։ Թ. 83.

— Յանուն Առաջնորդի թեմին հայոց Ամերիկայի, ի նոյն միտս։ Թ. 84.

— Յանուն Ամեն. Պատրիարքի հայոց Թուրքիոյ Տ. Մաղաքիա արքեպիսկոպոսի, ի նոյն միտս։ Թ. 85.

— Յանուն պայծառափայլ իշխան Սիմէօնի Աբամելիք-Լազարեան, որով յորդոր կարդացաւ նմա հանել յընչից իւրոց առատ մասն և բաժին ի նպաստ արկածեալ հայոց Կովկասու։ Թ. 86.

— Յանուն վսեմաշուք Պօղոս փաշայի Նուպար, ի նոյն միտս։ Թ. 87.

— Յանուն պատուարժան խորհրդոյ եկեղեցեաց հայոց Ս. Պետերբուրգի, ի նոյն միտս։ Թ. 88.

— Յանուն պատուարժան Հոգաբարձութեան հայազգի աղքատաց Նոր Նախիջևանի, ի նոյն միտս։ Թ. 89.

— Յանուն Բարեգործական Ընկերութեան Նոր Նախիջևանի, ի նոյն միտս։ Թ. 90.

— Յանուն Սինոդի սրբոյ Էջմիածնի, ընդ որում յղեալով զպայմանագիր գիւղատնտես պ. Կ. Մելիք Շահնազարեանց, առաջադրեցաւ տնօրինել զարժանն վասն վարձելոյ զնա։ Թ. 105.

— Յանուն Ամեն. Պատրիարքի հայոց Թուրքիոյ, որով լուծեցաւ պսակն Գալատի Քէֆէլեան Եւդոկացւոց ընդ ուխտադրուժ և դաւանափոխ կնոջն Փարէզի Զէօթզրանեան, տալով միայն առաջնոյն իրաւունս վերստին ամուսնանալոյ։ Թ. 109.

— Յանուն նորին, որով լուծեցաւ պսակն Կ. Պոլսեցի Դանիկի Կէօզլէրեան ընդ ախտաժէտ կնոջն Հայկանուշի,

տալով միայն առաջնոյն իրաւունս վերստին ամուսնանալոյ։ Թ. 110.

— Ցանուն Փոխ թեմական հայոց Երևանայ, որ տալով տեղեկութիւն զկարգմանէ Տ. Մեսրոպ վարդապետի Մաքսուտեան ի փոխ վանահայր ս. Թովմայի Առաքելոյ վանուց՝ որ յԱգուլիս, պատուիրեցաւ հարցանել զհաճութիւն Տ. Նահանգապետին վասն կարգելոյ զՄաշթոց վարդապետն ի վանահայր վանուցն Մուղնւոյ։ Թ. 122.

— Ցանուն Տ. Եփրեմ վարդապետի Սուքիասեանց՝ կառավարչի Էջմիածնապատկան կալուածոց Տփխեաց, որով յայտնեցաւ՝ եթէ ճարտարապետ Նիկողայոսն Գրիգորեան կարգեալ է ճարտարապետ վասն շինութեանց և նորոգութեանց կալուածոց այնոցունց, յատկացուցանելով նմա զ5 % ի ծախուց նոր շինութեանց։ Թ. 135.

— Ցանուն Առաջնորդի թեմին հայոց Վրաստանի և Իմերէթի, ի նոյն միտս։ Թ. 136.

— Ցանուն ճարտարապետ պ. Նիկողայոսի Գրիգորեան, ի նոյն միտս։ Թ. 137.

— Ցանուն Հոգաբարձութեան եկեղ. ծխական ուսումնարանի հայոց Ագուլեաց, որով յայտնեցաւ՝ եթէ Տ. Մեսրոպ վարդապետն Մաքսուտեան կարգեալ է փոխ վանահայր ս. Թովմայի Առաքելոյ վանուց և բարեկարգիչ կալուածոց նորին և ուսումնարանի։ Թ. 141.

— Ցանուն Տ. Մեսրոպ վարդապետի Մաքսուտեան, ի նոյն միտս։ Թ. 142.

— Ցանուն Սինոդի սրբոյ Էջմիածնի, որով պատուիրեցաւ տալ Տ. Մեսրոպ վարդապետի Մաքսուտեան զռոճիկ նորին վասն յունուար և փետրուար ամսոց տարւոյս։ Թ. 144.

— Ցանուն նորին, որով տուաւ տեղեկութիւն զկարգմանէ ճարտարապետ պ. Նիկողայոսի Գրիգորեան ի ճար-

տարապետ Էջմիածնապատկան կալուածոց Տփխեաց։ Թ. 145.

— Ցանուն Փոխանորդի վիճակին հայոց Կարուց, որով հաստատելով զնորընտիր Հոգաբարձութիւն շինութեան եկեղեցւոյն հայոց Կաղզուանի, պատուիրեցաւ թոյլ տալ հոգաբարձութեանն ծախել զ4000 ռուբլի դրամագլուխ եկեղեցւոյն մի միայն ի վերայ շինութեան նորին։ Թ. 158.

— Ցանուն Տ. Տաճատ վարդապետի, որով կարգեցաւ Հիւրընկալ հիւրատան Մայր Աթոռոյ։ Թ. 176.

— Ցանուն Սինոդի սրբոյ Էջմիածնի, ընդ որում յղելով զվկայական ձեռնադրութեան Խորէն վարդապետի Լազարեան, պատուիրեցաւ ընդունել զնա ի շարս միաբանից Մայր Աթոռոյ և վաւերացուցանել զվկայական նորին։ Թ. 179.

— Ցանուն Առաջնորդի հայոց Ամերիկայի, որով արտօնեցաւ Գեղամայ Նշիկեան Կարնեցւոյ մտանել յամուսնութիւն ըստ ծիսի հայոց եկեղեցւոյ։ Թ. 203.

— Ցանուն Ամեն. Պատրիարքի հայոց Թուրքիոյ, որով մերժեցաւ խնդիր լուծման պսակի Արուսեկի Ց. Թիւթիւնճեան Տիգրանակերտցւոյ ընդ առն Ցակոբայ Թիւթիւնճեան։ Թ. 204.

— Ցանուն վիճ. Կոնստատ. հայոց Վրաստանի և Իմերէթի, որով պատուիրեցաւ արտօնել զպսակ Սարդզի Սարգսեան ընդ ապօրինի կենակցի նորին Առաքելի Ոսկանեանց Վերին Աղդան գիւղացւոյ։ Թ. 241.

— Ցանուն Առաջնորդի թեմին հայոց Արցախոյ, որով պատուիրեցաւ տնօրինել վասն տալոյ Աղեքսանդրի Ղօրղանեանց զհասանելի նմա զմի հարիւր ռուբլի վարձատրութիւն յաղագս պաշտպանութեան կալուածոց ս. Աստուածածին եկեղեցւոյ Շուշւոյ։ Թ. 243.

— Ցանուն Փոխանորդի վիճակին հայոց Հ. Նախիջևանի, որով պատուիրեցաւ կարգադրելոյ վասն յղելոյ

վանահօր վանուց ս. Նախավկայի զվարձս կալուածոց նուրին, որ յԱստաբաթ գեղջ, ի գումարի 400 ր.։ Թ. 244.

— Ցանուն վիճ. Կոնսիստոր. Հայոց Շամախւոյ, որով պատուիրեցաւ ի կատար ածել զհրաման Սինոդի սրբոյ Էջմիածնի, վերաբերեալ ամուսնական խնդրոց Մարիամայ և Ապրեսի Բալայեանց։ Թ. 251.

Բ.

Հայրապետական օրհնութիւնք եւ զոհունակութիւնք.

Կոնդակ յանուն պ. Լեոնի Տինկիլեան ի Լոնդոն վասն նուիրաբերեալ չորս անգլ. ոսկւոյ ի նպաստ արկածելոց հայոց Կովկասու։ Թ. 115.

— Ցանուն հայ ժողովրդեան Ֆրէզնօ քաղաքի Ամերիկայի վասն նուիրաբերելոյ 286 բուբլի ի նպաստ արկածելոց հայոց Կովկասու։ Թ. 116.

— Ցանուն Ցանճնախմբի հայոց Ուօքէգբնի յԱմերիկա վասն նուիրաբերեալ 193 ր. 24 կ. ի նպաստ արկածելոց հայոց Կովկասու։ Թ. 117.

— Ցանուն հայ ժողովրդեան Պոսթոն քաղաքի Ամերիկայի վասն նուիրաբերեալ 66 ր. ի նպաստ արկածելոց հայոց Կովկասու։ Թ. 118.

— Ցանուն հայ ժողովրդեան Սէնթրըլ-ֆոլս քաղաքի վասն նուիրաբերեալ 67 ր. 5 կ. ի նպաստ կարօտելոց Սասնոյ։ Թ. 119.

— Ցանուն անդամոց հայասէր խմբին Ամերիկացւոց վասն նուիրաբերեալ ի նպաստ արկածելոց հայոց Կովկասու 190 դոլլարի։ Թ. 120.

— Ցանուն Բագուեցի պ. Ալէքսանի Պետրոսեանց վասն նուիրաբերելոյ զերկերիւր (200) բուբլիս յօգուտ չքաւորաց։ Թ. 129.

— Յանուն Համբարձումայ Ղազարեանց Գէորգեսկ քաղաքացւոյ վասն նուիրաբերեալ միոյ ձեռագիր Զայնքաղ Շարականի մատենադարանի Մայր Աթոռոյ։ Թ. 159.

— Յանուն պ. Արամայ Բժշկեան Կ. Պոլսեցւոյ յաղագս ի լոյս ընծայելոյ և յղելոյ քանի մի օրինակաց երկասիրութեանն «Դայլայլիկս գարնան»։ Թ. 163.

— Յանուն Հոգաբարձութեան ս. Փրկչեան Ազգային Հիւանդանոցին Կ. Պոլսոյ վասն յղելոյ օրացուցաց 1906 ամի։ Թ. 164.

— Յանուն Հոգաբարձութեան ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցւոյ հայոց Փարիզի վասն նուիրաբերեալ մի հազար ռուբլւոյ ի նպաստ արկածելոց հայոց Կովկասու։ Թ. 165.

— Յանուն հայ. ազգ. Հոգաբարձութեան Թրօ քաղաքի Ամերիկայի վասն յղելոյ 45½ անգլ. ոսկւոյ ի նպաստ արկածելոց հայոց Կովկասու։ Թ. 205.

— Յանուն այրի երիցուհւոյ Լուսիայի Մանդակունւոյ Թէոդոսիա քաղաքացւոյ վասն մատուցանելոյ զպատճէն կտակի հանգուցեալ ամուսնոյն Արսէն քահանայի Մանդակունւոյ։ Թ. 222.

— Յանուն Պօղոս Փաշայի Նուպար՝ նախագահի հայկական Բարեգործական ընդհանուր միութեան վասն նուիրաբերեալ 2920 ր. 61 կ. յօգուտ արկածելոց հայոց Կովկասու։ Թ. 234.

— Յանուն երկուց եղբարց Աղէքսանդրի և Միսակայ Մուրատեանց Ախլցխացւոյ վասն նուիրաբերեալ ի պէտս շինութեանց Մայր Աթոռոյ մի հարիւր ռուբլի։ Թ. 252.

Գ.

Հայրապետական պարգեւք.

Կոնդակ լանջախաչի յանուն Տ. Մեսրոպ վարդապետի Մաքսուտեան։ Թ. 211.

— Ցանուն Աղդ. եկեղ. Հոդաբարձութեան Թրոյ քաղաքի Ամերիկայի ընդ սրում յղեցաւ խաչ մի ձեռաց վանն եկեղեցւոյ տեղւոյն։ Թ. 235.

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Փետրվար 1-ի օրագրութեամբ Սինոդը որոշեց մերժել Կոռնձոր գիւղի (Տաթևու վիճ.) նախկին քահանայ Գրիգոր Տէր Սողոմոնեանի և նոյն գիւղի ժողովրդականաց խնդիրը Տէր Սողոմոնեանին քահանայական կարգը վերադարձնելու մասին։

Փետրվար 3-ի օրագրով, ըստ կոնդակի Վեհափառ Կաթուղիկոսի, Սինոդը կարգեց վանահայր Ճալէթու Տ. Սահակ վարդապետ Բաղդասարեանցին։

Նոյն օրը Սինոդը որոշեց ազդարարել վանքապատկան գիւղերի (Վաղարշապատի, Օշականի, Եղուարդի, Մաստարի և Մողնու) ժողովրդականաց, որ այն անձինք, որոնք ժառանգութիւն են ստացել, կամ որոնց Սինոդը յատկացրել է տնատեղի և այգեատեղի և նրանք վաճառել են ուրիշներին և կամ կվաճառեն, այդպիսիներին ու նրանց ժառանգներին նոր տնատեղի և այգեատեղի չի տրուիլ։

Փետրվարի 6-ին Սինոդը որոշեց ապացուցուած համարել Քրիստափոր Լեոնիկեանի պոռնկութիւնը, լուծել նրա պսակը Մարիամ Վարդանեանի հետ վերջնիս արտօնելով նոր ամուսնութիւն մտնել։

Նոյն օրը Սինոդը որոշեց ապացուցուած համարել Նունէ Փրիդոնեան Ազիզեանցի պոռնկութիւնը և լուծելով նրա պսակը Սիրական Ազիզեանի հետ, թոյլ տալ վերջնիս մտնել նոր ամուսնութիւն։

Նոյն օրը Սինոդը լսեց Ղարաբաղի Կոնսիստորիայի յայտարարութիւնը գրուած յունվար 15-ին № 44 Աղդաշ